ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ՝ ՀԵՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ Փ. ՎԵԴԻ ԳՅՈՒՂԻ << ԶԱՐԹՈՆՔ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ՝ Մ.Գ.Թ.,ՊՐՈՖ. ՄԱՐՈՒԹՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՎԵԴԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. 3
ԳԼՈՒԽ1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
1. 1. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ. 5
1. 2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ. 13
ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2. 1 Ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառումը որպես ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունն ապահովող պայման. 18
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 21
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ. 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը

Տարբեր ժամանակաշրջաններում նախադպրոցականի կրթության և դաստիարակության հարցերը եղել են պետության և հասարակության ուշադրության կենտրոնում, իսկ կրթության բովանդակությունն ու ուսուցման կազմակերպման ձևերը փոփոխվել են՝ կապված հասարակության զարգացման արդի միտումների, բարձր տեխնոլոգիաների ներդրման, գիտատեխնիկական առաջընթացի և աշխարհաքաղաքական արմատական տեղաշարժերի հետ: Վերջին տարիներին ՀՀ-ում իրականացվում են մի շարք կրթական բարեփոխումներ, որի նպատակը կրթության որակի բարձրացումն է, կրթության դերի արժևորումը, որը հասարակության կայուն զարգացման հիմքն է:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման արդի ժամանակաշրջանում անհրաժեշտ է ստեղծել կրթական այնպիսի բարեհարմար միջավայր, որը կնպաստի նախադպրոցական սանի ընդհանուր զարգացմանն ու ինքնազարգացմանը: Ուսուցման գործընթացը, որպես կազմակերպված, պլանավորված մանկավարժական գործընթաց կարող է նպաստել վերոնշյալ խնդիրների իրականացմանը:

Հետազոտական աշխատանքի թեման արդիական է, ինչը պայմանավորված է այսօր իրականացվող բարեփոխումներով, տեխնիկական և տեխնոլոգիական նորամուծություններով, մանկավարժական նոր տեխնոլոգիաների, ժամանակակից նոր մեթոդների, միջոցների կիրառմամբ, որոնք հնարավորություն են ընձեռում բարձրացնել դասավանդման և ուսուցման գործընթացի արդյունավետությունը: Այսօր էլ ՀՀ կրթության համակարգում իրականացվող բարեփոխումներն ուղղված են նաև նախադպրոցականի կրթության բովանդակության արդիականացմանը, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների, մեթոդների, միջոցների, ձևերի որոնմանը: Նախադպրոցական հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար՝ անհրաժեշտ է, որպեսզի դաստիարակը կիրառի ուսուցման ժամանակակից, փոխներգործուն մեթոդներ, որոնք հանդիսանում են լավագույն միջոցը մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու համար:

Հետազոտական աշխատանքի նպատակն է առաջարկել և տեսականորեն փորձարարությամբ հիմնավորել ուսուցման մեթոդների կիրառման արդյունավետությունը մանկապարտեզի ուսումնադաստիարակչական ուսուցման գործընթացում:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են .

- ներկայացնել մանկապարտեզի ուսումնադաստիարակչական պրոցեսում կիրառվող ուսուցման մեթոդները և դրանց դասակարգումը,
- ուսումնասիրել և վերլուծել փոխներգործուն ուսուցման մեթոդների ընդհանուր բնութագիրը,
- ուսումնասիրել մանկապարտեզում կիրառվող փոխներգործուն ուսուցման մեթոդների առանձնահատկությունները,
- իրականացնել սոցիարցումներ՝ բացահայտելու համար փոխներգործուն ուսուցման մեթոդների կիրառման արդյունավետությունը մանկապարտեզում:

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Մանկապարտեզում կիրառվող ուսուցման մեթոդները և դրանց դասակարգումը

Պատմամշակութային բոլոր ժամանակաշրջաններում «ինչ սովորեցնել», «ինչպես սովորեցնել», «կազմակերպման ինչ ձևերով սովորեցնել» դիդակտիկական հարցադրումները հետաքրքրել են մանկավարժներին և արդիական են նաև այսօր։

Նախադպրոցական տարիքի երեխաներն ունեն իրենց տարիքին բնորոշ տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունները, աչքի են ընկնում իրենց ընկալման սրությամբ և առավել ցայտուն են ընկալում այն առարկաները, երևույթները, որոնք գունեղ ենև տպավորիչ։ Սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ մանկապարտեզում պետք է ապահովել զննականությունը, այսինքն՝ կիրառել զննականության սկզբունքը, որը չեխ մանկավարժ Յան Ամոս Կոմենսկին անվանում էր դիդակտիկայի «Ոսկե կանոն»։ Նախադպրոցականների մտածողությունը կոնկրետ առարկայական է, նրանք դիտում են, զննում, ուսումնասիրում, բացահայտում առարկաների և երևույթների կարևոր հատկանիշները։ Նրանց ուշադրությունը ոչ կամածին է, հիշողությունը մեխանիկական,երևակայությունը զարգացած։Նրանք կարող են հիշել այն երևույթները և առարկաները, որոնք ավելի տպավորիչ են և հետաքրքիր։ Յուրաքանչյուր դաստիարակ պետք է ոչ միայն լավ ճանաչի սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, այլև հաշվի առնի դրանք գործընթացը կազմակերպելիս։ Ուսումնադաստիարակչական գործընթացը հաջող պլանավորելու, արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է որպեսզի դաստիարակը ընտրի և կիրառի ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք առավել արդյունավետ կդարձնեն գործընթացը։

Մեթոդը (հունարեն methodos՝ ճշմարտությանը, սպասված արդյունքին հասնելու ուղի, ձև, եղանակ, միջոց) ըմբռնվում է իբրև գործունեության եղանակների ու հնարների համակարգ, որն ապահովում է տվյալ գործունեության արդյունավետ իրականացումը։

Մեթոդներն ուսումնական գործընթացի այն անհրաժեշտ բաղադրիչներն են, որոնք օգնում են իրագործել դիդակտիկական նպատակները:

Մի շարք հոգեբաններ ու մանկավարժներ կարծում են, որ ուսումնադաստիարկչական գործընթացի հաջողությունները պայմանավորված են սաների ընդունակություններով, ակտիվությամբ, ինչպես նաև դաստիարակի կողմից մեթոդների հնարների, միջոցների արդյունավետ կիրառմամբ:

Ուսուցման մեթոդների դասակարգման վերաբերյալ կան մի շարք մոտեցումներ: Օրինակ՝ Ն. Մ. Վերզիլինը նշում է, որ մեթոդի սահմանումը տրամաբանորեն բխում է դաստիարակի և սանի գործունեության միասնությունից, սակայն առաջնայինն դաստիարակի գործունեությունն է: Ըստ նրա՝ «Ուսուցման մեթոդը դաստիարակի կողմից գիտելիքների հաղորդման և սաների կողմից դրանց յուրացման եղանակն է
»[7, էջ 12]:Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը բխում է դաստիարակի և սանի ուսումնական գործունեության միասնությունից և ուսումնական գործընթացի սուբյեկտների ակտիվ փոխգործակցության արդյունքում կարող են լուծվել դիդակտիկական մի շարք խնդիրներ և տրվեն դիդակտիկական վերոնշյալ հարցադրումների պատասխանները:

Մի շարք մտածողներ հակված են այն մտքին, որ ուսուցման մեթոդը սաների ուսումնադաստիարակչական գործունեության կազմակերպման եղանակն է, իսկ դաստիարակի խնդիրը սաներին գործընթացում ներգրավվելն է:
Այս տեսանկյունից Ս. Ա. Սմիրնովը ուսուցման մեթոդները բնութագրում է որպես՝«սովորողների ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպում նախապես սահմանված խնդիրներով, ճանաչողական գործունեության մակարդակներով, ուսումնական գործողություններով և դիդակտիկ նպատակներին հասնելու ակնկալվող արդյունքներով»[9]:

Ըստ ՅՈՒ. Կ. Բաբանսկու՝ «ուսուցման մեթոդները դասավանդողի և սովորողի կանոնակարգված, փոխկապակցված գործունեության եղանակ են՝ ուղղված կրթության խնդիրների լուծմանը»[16]:

Ընդհանրացնելով ուսուցման մեթոդների մասին տարբեր մոտեցումները՝ կարող ենք սահմանել, որ ուսուցման մեթոդները ուսուցչի և աշակերտի փոխգործակցության, ուսուցչի կողմից սովորողների ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման եղանակներ են, որոնք ուղղված են անձի կրթությանն ու դաստիարակությանը՝ ըստ առաջադրված խնդիրների։

Ժամանակակից մանկավարժության մեջ մշակվել են ուսուցման մեթոդների մի շարք դասակարգումներ, ստորև ներկայացնենք դրանցից մի քանիսը.

Ն. Մ. Վերզիլինը և Ե. Ա. Գոլանտն առանձնացրել են ուսուցման խոսքային, զննական և գործնական մեթոդների խմբերը [12,13]։

Մ. Ա. Դանիլովը և Բ. Պ Եսիպովը ուսուցման մեթոդները դասակարգել են ըստ հետևյալ խմբերի՝ նոր գիտելիքների ձեռքբերման, հմտությունների ու կարողությունների ձևավորման, կիրառության, գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ամրակայման, ստուգման մեթոդներ։

Ուսուցման մեթոդների առավել տարածված դասակարգման հեղինակներ Մ. Ն. Սկատկինը և Ի. Յա. Լերներն առաջարկում են ուսուցման մեթոդները բաժանել ըստ ուսումնասիրվող նյութի յուրացման ուղղությամբ աշակերտների ճանաչողական գործունեության բնույթի՝ բացատրական-ցուցադրական, վերարտադրողական, պրոբլեմահարույց շարադրանքի, մասնակի-որոնողական և հետազոտական [15,17]։

Վերոնշյալ հեղինակների դասակարգումը նպատակաուղղված է տարրական դպրոցի ուսուցման գործընթացում սովորողների ակտիվ ներգրավվածությանն ու ճանաչողական գործունեության մակարդակի բարձրացմանը։Այսօր ժամանակակից դիդակտիկայում ուսուցման մեթոդների դասակարգման վերաբերյալ մանկավարժ-դիդակտների մոտեցումները տարբեր են։Ներկայումս առավել տարածված է ուսուցման մեթոդների հետևյալ դասակարգումը՝

Խոսքային մեթոդներ. գիտելիքի աղբյուր է հանդիսանում բանավոր, տպագիր կամ էլեկտրոնային խոսքը։

Զննական մեթոդներ. գիտելիքների ձեռքբերման աղբյուր են հանդիսանում ցուցադրվող առարկաները, զննական պարագաները։

Գործնական մեթոդներ. սաները գիտելիք են ստանում և ձևավորում

հմտություններ՝ կատարելով գործնական աշխատանք դաստիարակի ղեկավարությամբ։Անառարկելի է այն փաստը, որ ուսուցման մեթոդները նպատակաուղղված են դիդակտիկական խնդիրներ լուծելուն և այս տեսանկյունից չպետք է գերագնահատել այս կամ այն մեթոդի դերը։ Ուսուցման մեթոդների դասակարգումը ներկայացնենք գծապատկերի տեսքով.

Գծանկար 1



Ուսուցման խոսքային մեթոդներ

Ուսուցման գործընթացում խոսքային մեթոդներն որոշ չափով գերակշռում են, քանի որ գիտելիքների ձեռքբերման աղբյուրը գրավոր և բանավոր խոսքն է: Մեթոդների անընդհատ կիրառումը դասը դարձնում է ուսուցչակենտրոն՝ նվազեցնելով սաների գիտակցական ակտիվությունը և ստեղծագործական-որոնողական գործունեություն ծավալելու հնարավորությունը: Մանկապարտեզում կիրառվում են խոսքային հետևյալ մեթոդները՝ պատմել, բացատրություն, զրույց, բանավեճ, :

Պատմելը կիրառվում է տարրական դպրոցում իրականացվող ուսումնական գործընթացի բոլոր փուլերում: Այն դաստիարակի կողմից մատուցվող նյութի համակարգված, մատչելի և հուզական ներկայացումն է [3]:

Պատմելու մեթոդի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է՝

- նյութի հավաստիություն,
- շարադրանքի գրագիտություն, տրամաբանություն, մատչելիություն,
- նյութի շարադրման տրամաբանական հաջորդականության ապահովում,

- գլխավորի և երկրորդականի տարրանջատում,
- պատմողի սեփական դիրքորոշման արտահայտում։

Բացատրությունն ուսումնական նյութի շարադրումն է՝ առաջադրելով և պատասխանելով՝«ինչ»,«ինչու»,«ում», «որտեղ», «երբ»և այլ հարցերի։ Բացահայտվում է նոր տեղեկույթի տրամաբանական հաջորդականությունը, առանձնացնում կարևորը և այլն։ Խոսքի տեսակներն ըստ նշանակության լինում են՝ պատմողական, նկարագրական,դատողական,գնահատող։

Զրույցի մեթոդ. Զրույցը և՛ ուսուցման մեթոդ է, և՛ դաստիարակության ։ Զրույցը բանավոր մենախոսություն է կամ երկխոսության ձև, որի ժամանակ՝

Սաները կենտրոնանում են ուսուցանվող թեմայի հիմնական ողղությունների վրա,

- Սաները նոր տեղեկատվություն են ձեռք բերում զրույցի թեմայից,
- ստեղծվում են սաներին հաղորդակցական, համագործակցային կարողությունները բավարարող պայմաններ,
- ձևավորում են գործնական և ընկերական բարեկիրթ փոխհարաբերություններ,

Ջ. Գյուլամիրյանն առանձնացնում է զրույցի հետևյալ տեսակները, որոնք կարող են գործածվել ինչպես ուսուցողական, այնպես էլ դաստիարակչական խնդիրներ լուծելու նպատակով.

Տեղեկատվական զրույց. կիրառվում է նոր նյութի ուսումնասիրման փուլում։

Ներգործող զրույց. կիրառվում է սաների համոզմունքների, հայացքների, զգացմունքների վրա ազդելու նպատակով։

Համոզող զրույց. կիրառվում է, երբ անհրաժեշտ է սաներին մղել որևէ գործողության, արարքի՝ ազդելու համար ոչ միայն նրանց զգացմունքների և գիտակցության, այլև կարծիքների, կամքի, համոզմունքների, հայացքների վրա։

Իրադրությունային զրույց. որևէ իրադարձության իրավիճակի, դեպքերի շուրջ դաստիարկը անցկացնում է երկկողմանի հարցազրույց [5]։

Ուսումնասիրելով վերոնշյալ զրույցի տեսակները՝ մենք նույնպես համամիտ ենք հեղինակների այն կարծիքի հետ, որ ուսումնադատիարակչական գործընթացում անհրաժեշտ է կիրառել զրույցի վերոնշյալ տեսակները, ինչպես նաև անցկացնել նախապատրաստական, ուղեկցող և ամփոփիչ զրույցներ: Եվ կարծում ենք, որ մանկապարտեզում ուսումնադաստիարկչական գործընթացում պետք է մշտապես լայնորեն կիրառել ուսուցման փոխներգործուն մեթոդներ: Փոխներգործուն մեթոդները հնարավորություն են ընձեռում ուսուցման գործընթացում իրականացնել ուսուցողական երկխոսություն,որը խթանում է անձի մտագործունեության և հոգեկան գործընթացների զարգացումը:

Ուսումնական բանավեճի հիմքում որոշակի խնդրի շուրջ սաների հայացքների, տեսակետների փոխանակումն է: Որևէ հիմնախնդրի գիտական տարբեր տեսանկյունների ակտիվ քննարկմանը մասնակցելով՝ կրտսեր դպրոցականները սովորում են քննադատաբար մտածել, վերլուծել, համադրել նհայտնել իրենց սեփական տեսակետը:

Զննական մեթոդներ

Այս ենթախմբի մեջ են մտնում երևույթների՝ առարկաների գործընթացների ցուցադրումը նշանային համակարգերի միջոցով, ինչն ուղեկցվում է դիդակտիկ պարագաների ոչ շարժական և շարժական ցուցադրմամբ:

Դիդակտիկայում ուսուցման զննական մեթոդները պայմանականորեն բաժանվումեն երկու խմբի՝ պատկերազարդման և ցուցադրությանմեթոդներ:

Պատկերազարդման մեթոդներ. նյութը հաղորդելիս անհրաժեշտ է կիրառել զննական պարագաներ՝ քարտեզներ, պաստառներ, գծանկարներ, նկարազարդ ձեռնարկներ, աղյուսակներ, գրատախտակին նկարված պատկերներ և այլն:

Քանի որ մանկապարտեզի սաների մտածողությունը պատկերավոր է, պրակտիկ առարկայական, ուստի ուսուցման գործընթացում նպատակահարմար է գործածել սաների ձեռքով պատրաստված պարագաներ, որոնք կնպաստեն նրանց աշխատանքային, գեղագիտական դաստիարակության իրականացմանը, ինչպես նաև ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Ցուցադրության մեթոդներ. այս մեթոդներն իրականացվում են սարքերի, փորձերի, տեխնիկական միջոցների, տեսասահիկների, կինոնկարների, դիաֆիլմերի, հեռուստաֆիլմերի ցուցադրության միջոցով։

Աներկբա է այն փաստը, որ մանկապարտեզի սաներին ավելի հետաքրքիր է այնպիսի երևույթները, որոնք շարժման մեջ են գտվում։ Ուստի տեսաֆիլմերի, տեսասահիկների, ցուցադրվող տարրատեսակ նյութերի միջոցով զարգանում է նրանց մտածական գործընթացները, ինչպես նաև շրջակա աշխարհի ընկալումը։

Վերոնշյալ դասակարգումը համարվում է պայմանական, քանի որ ուսուցման որոշմիջոցներ կարող են վերաբերվել և՛ պատկերազարդմանը, և՛ ցուցադրությանը։ Բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ուսուցման զննական մեթոդներ կարելի է դիտարկել նաև՝ զննական պարագաների, տեսանյութերի ցուցադրումը, փորձը, ինչպես նաև մոդելավորումը։

1. 2 ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը նպաստում է ոչ միայն կրթության որակի բարձրացմանը, այլև ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Ժամանակակից մանկավարժության խնդիրներից են՝ գիտական մտքի զարգացումը, հետազոտական աշխատանքների իրականացումը, կրթության բովանդակության արդիականացումը, ուսուցման նոր մեթոդների, միջոցների, տեխնոլոգիաների ստեղծումը և դրանց կիրառումը պետական կրթակարգին համապատասխան: Այս համատեքստում՝ կրթության բովանդակության արդիականացումը ենթադրում է ուսուցման գործընթացը ակտիվացնող նոր՝ փոխներգործուն մեթոդների կիրառում ուսուցման գործընթացում: Մանկավարժության մեջ ուսուցման փոխներգործուն մեթոդներն անվանում են նաև ուսուցման ինտերակտիվ մեթոդներ:

«Ինտերակտիվ» հասկացությունը (անգլ. interaction՝ փոխազդեցություն, փոխանցել, կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել, փոխազդել միմյանց վրա) մանկավարժության ոլորտ է ներմուծվել սոցիալական հոգեբանությունից: Այն դիտարկվում է որպես միմյանց հետ փոխազդեցության մեջ գտնվել, փոխազդել, մարդու կամ ինչ-որ օբյեկտի հետ (օրինակ՝ համակարգիչ) զրույցի, երկխոսության մեջ գտնվելու կարողություն [4]:

Մանկավարժական տեսանկյունից փոխներգործուն ուսուցման հիմքում սովորողին կրթական միջավայրի փոխազդեցությունն է, գիտելիքների ձեռքբերման համատեղ գործընթաց, որի ընթացքում անընդհատ փոխվում է գործունեության ձևը՝ խաղ, բանավեճ, քննարկում և այլն: Ուսուցման փոխներգործուն մեթոդները խթանում են մանկապարտեզի սաների ճանաչողական ակտիվությունը, նպաստում երկխոսության, համագործակցային կարողությունների ձևավորմանը: Փոխազդելով միմյանց՝ մասնակիցները տեղեկություն են փոխանակում, համատեղ լուծում են խնդիրներ, մոդելավորում են իրավիճակներ, գնահատում իրենց կատարած աշխատանքը, սեփական

վարքագիծը, որն էլ նպաստում է սաների ինքնագնահատականի բարձրացմանը՝ ուսուցման գործընթացը դարձնելով արդյունավետ։

Փոխներգործուն ուսուցումն ուսումնական գործունեության կազմակերպման յուրահատուկ ձև է, որն ունի որոշակի նպատակներ և այդ նպատակներից մեկը կրթական բարեհարմար միջավայրի ձևավորումն է, որում երեխան զգում է իր անձի կարևորությունը՝ դրսևորելով իր իմացական ներուժը, հնարավորությունները, ինչն էլ ուսուցման գործընթացը դարձնում է առավել արդյունավետ։

Փոխներգործուն ուսուցման էությունն այն է, որ բոլոր սաները ընդգրկվում են այդ գործընթացի մեջ, ընդ որում յուրաքանչյուրն իր անհատական ներդրում է ունենում գիտելիքների ձեռքբերման ու մտքերի փոխանակման ընթացքում։ Դա տեղի է ունենում փոխըմբռնման բարյացակամ միջավայրում, որը թույլ է տալիս՝համագործակցելով ոչ միայն նոր գիտելիք ստանալ, այլև լինել ակտիվ մասնակիցը այդ գործընթացի։Փոխներգործուն ուսուցումը բացառում է որևէ մեկի առաջնությունն ու գերակայությունը, որևէ մեկի տեսակետի առավելությունը մյուսների նկատմամբ։ Այսպիսի ուսուցման գործընթացքում սաները սովորում են քննադատաբար մտածել, տեղեկատվության վերլուծության հիման վրա խնդիրներ լուծել, քննարկել այլոց տեսակետները, ընդունել կշռադատված որոշումներ, մասնակցել բանավեճերի։ Կարևոր է նշել, որ այս գործընթացում իրացվում են ուսուցման այնպիսի սկզբունքներ՝ ինչպիսիք են փոխազդեցությունը, փոխուսուցումը, սովորողի գիտակցականությունն ու ակտիվությունը, համագործակցությունը։

Այսօր մանկապարտեզի սաների ուսուցման գործընթացում կիրառվում է փոխներգործուն մեթոդների մեծ համախումբ, որն ապահովում է դաստիարակության և ուսումնառության այնպիսի մոտեցում, համաձայն որի՝ յուրաքանչյուր սան պետք է դառնա գործընթացի, ակտիվ մասնակիցը՝ ինքնուրույնաբար անցնելով գիտելիքների ձեռք բերման դժվարին ճանապարհը։ Այդ կերպ նա յուրացնում է համագործակցային, սոցիալական փոխազդեցության և

հաղորդակցական, ինչպես նաև ձեռք բերած գիտելիքները՝ գործնականում կիրառելու կարողություններ:

Այսօր մանկապարտեզում լայնորեն կիրառվում են ուսուցման հետևյալ փոխներգործուն մեթոդները՝մտագրոհ, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, փոխադարձ ուսուցում, ձնագնդի, Վենի դիագրամ, T- աձև աղյուսակ, քառաբաժան աղյուսակ և այլն:

Փոխներգործուն ուսուցման մեթոդների ընտրության վրա ազդող գործոններն են.

- ուսուցման նպատակները, խնդիրներն ու բովանդակությունը,
- ուսումնական նյութի ծավալն ու բարդությունը,
- սաների պատրաստվածության մակարդակը, փորձի առկայությունը,
- սաների շահագրգռվածությունը, դրդապատճառները,
- սաների տարիքը, աշխատունակությունը, ծանրաբեռնվածությունը, դիմացկունությունը, վարժվածությունը,
- ուսումնական ժամաքանակը,
- ուսուցման նյութատեխնիկական ու կազմակերպական պայմանները,
- ուսումնական պարապմունքի տեսակը և կառուցվածքը,
- սաների թվաքանակը խմբում, դաստիարակ- սան փոխհարաբերությունների բնույթը (ավտորիտար,

  ժողովրդավարական, լիբերալ և այլն),
- դաստիարակի պատրաստվածության մակարդակը և այլն:

Փոխներգործուն մեթոդներով ուսուցում իրականացնելիս ցանկալի է ստեղծել բարյացակամ, հուզական, փոխադարձ վստահության մթնոլորտ, աշխատանքում ներգրավել խմբի բոլոր անդամներին, կիրառել խաղային տեխնոլոգիաներ, ազատ ընտրությունն ընդունել որպես անձնային և հուզական փոխազդեցության հիմք [1, էջ 187]:

«**Մտագրոհ**» (մտքերի տարափ)

Հեղինակը ամերիկացի գիտնական Ալեքս Օսբորն է: Այս մեթոդական հնարի կիրառումը խթանում է սովորողների ստեղծագործական ակտիվությունը, նպաստում ուշադրության կենտրոնացմանը: Նպատակը կոլեկտիվ մտածական գործունեության կազմակերպումն է՝ առաջադրված խնդիրների լուծման ավելի հետաքրքիր եղանակների որոնման նպատակով: Այս մեթոդական հնարն ամենահաճախն է կիրառվում դասի խթանման փուլում: Կիրառվում է հետևյալ առարկաների դասաժամերին՝ «Մայրենի»,
«Ես և շրջակա աշխարհը», «կերպարվեստ», «տեխնոլոգիա»,«մաթեմատիկա»:

Մտագրոհ մեթոդի կիրառման ընթացքում գործածվում է հետևյալ կանոնները.

- ցանկացած քննադատության բացակայություն,
- գաղափարների խրախուսում,
- մասնակիցների հավասարություն,
- զուգորդումների (ասոցիացիաների) ազատություն,
- բոլոր մտքերի գրառում,
- ճիշտ ու սխալի բացառում:

Մտագրոհի մեթոդի կիրառումը մեծապես նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև՝ նպաստում է նոր գաղափարների ի հայտ գալուն, բոլորի ազատ, հավասար մասնակցությունը, արդյունավետ առաջարկությունների համար անհրաժեշտ գիտելիքների ծավալի պարտադիր առկայությանը և այլն:

«**Ակվարիում**»

Ակվարիում մեթոդը դերային խաղի տարատեսակ է, որին մասնակցում են երկուսից երեք սովորող, իսկ մյուսները հանդես են գալիս դիտողի դերում, որը մի քանիսին հնարավորություն է տալիս սովորել, զգալ այդ իրավիճակը, իսկ մյուսներին՝ վերլուծել իրավիճակը: Խումբը տեղավորվում է դասարանի կենտրոնում, ստանում առաջադրանքը և սկսում քննարկել, վերլուծել: Տրված ժամանակի ավարտից հետո կենտրոնում (ակվարիում) գտնվող խումբը ներկայացնում է առաջադրանքը և միանում մյուս մասնակիցներին:

«Դերային խաղեր»

Դերային խաղերի ժամանակ աշակերտներին առաջարկվում է տարբեր ստեղծագործություններից կամ այլ իրադրություններից ընտրել զանազան դերեր, խաղալ կարճ խոսքային դրվագներ, որպես կանոն՝ պրոբլեմային։ Դերային խաղերի ընթացքում մասնակիցները ստանձնում են որևէ դեր, սեփականում որևէ տեսակետ և փորձում են այն հասունացնել և ավարտել։ Շահեկան է կազմակերպել ինչպես ուսումնական նյութի իմաստավորման , այնպես էլ կշռադատման փուլում։ Դերային խաղերը հաճախ կիրառվում են միջանձնային հարաբերությունների կարգավորման և հաղորդակցական կարողությունների զարգացման նպատակներով։ Դերային խաղերն իրականացվում են մի շարք խորհուրդների հիման վրա, որոնք ապահովում են մեթոդի արդյունավետության բարձրացմանը։ Այդ խորհուրդներն են՝ մշակել մանրակրկիտ պլան,դերային խաղը անցկացնել տեղին, ցանկալի է, որ խմբերը փոքր լինեն, ստեղծագործաբար կիրառել դերային խաղը։ Այս մեթոդի առավելությունն ձեռք բերված փորձի երկար պահպանումն է։

ԳԼՈՒԽ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառումը որպես ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունն ապահովող պայման

Փոխներգործուն ուսուցման մեթոդների կարևոր առանձնահատկությունն այն է, որ նրանք ապահովում են ուսուցման գործընթացի մասնակից սուբյեկտների փոխադարձ ակտիվության բարձր մակարդակ, որը ներառում է ինչպես զգայական, հոգևոր ոլորտը, այնպես էլ փոխազդեցության գործնական ուղղվածությունը:

Փոխներգործուն ուսուցման առավելություններն են՝

- թույլ է տալիս սեփական փորձի վրա գիտակցել և քննարկել նյութը,
- ձևավորում են շփման հմտություններ,
- օգնում է գիտակցել խմբային փորձի նշանակությունը,
- զարգացնում է պատասխանատվության և խմբի արդյունքի համար հաշվետո ւլինելու զգացումը,
- խթանում է թիմային փոխգործակցությունը,
- ընձեռում է ինքնադրսևորման հնարավորություն, սաները սովորում են միմյանցից,
- սովորեցնում է մասնակցել և վերահսկել սեփական մասնակցությունը խմբային աշխատանքում,
- հարգել խմբի օրենքները, հիմնավորել և պաշտպանել սեփական տեսակետն ուղիրքորոշումը,
- օգնում է համաձայնեցնել գործողությունները,
- սովորեցնում է գիտելիքներ ձեռք բերել փորձի միջոցով:

Վ. Ս. Կուկուշկինը նշում է, որ փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունքում՝

- խթանվում են սովորողների հետաքրքրությունները,

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր դիտարկումների ընթացքում հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Ուսուցման մեթոդներն դաստիարակի և սանի փոխգործակցության, դաստիարակի կողմից սովորողների ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման եղանակներ են, որոնք ուղղված են սանի կրթության ու դաստիարակության իրականացմանը:
2. Կրթության բովանդակության արդիականացումը հնարավոր է իրականացնել ուսուցման և դաստիարակության փոխներգործուն մեթոդների կիրառմամբ, որի հիմքում սովորողի և կրթական միջավայրի փոխազդեցությունն է, գիտելիքների ձեռքբերման գործընթացը: Ուսուցման փոխներգործուն մեթոդները խթանում են սաների ճանաչողական ակտիվությունը, նպաստում համագործակցային կարողությունների ձևավորմանը:
3. Մանկապարտեզի սաների ուսումնադաստիարակչական արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ գործընթացում հաճախակի են կիրառվում ուսուցման փոխներգործուն մեթոդներ: Այն հնարավորություն է տալիս նյութը մատչելի, հետաքրքիր և պատկերավոր ձևով հաղորդել սաներին , որը և նպաստում է գիտելիքների ավելի կայուն, արդյունավետ յուրացմանը:
4. Փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունավետության վերաբերյալ դաստիարակի և սաների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը բացահայտում է.

- փոխներգործուն մեթոդները մանկապարտեզի սաների ուսուցման գործընթացում հաճախակի կիրառվում են և բավականին արդյունավետ են,
- արդյունավետ են այն ժամանակ, երբ դաստիարակը դասավանդման գործընթացում զուգակցում է ավանդական և փոխներգործուն մեթոդները,
- սաները սիրում են փոխներգործուն մեթոդներով կազմակերպված պարապմունքներ,
- փոխներգործուն մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս սաներին ակտիվորեն համագործակցել միմյանց հետ և լինել պարապմունքի ակտիվ մասնակիցը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Լ. Թ., Հակոբյան Գ. Հ., Ասատրյան Մ. Ա., Գևորգյան Մ. Մ., Կարապետյան Ն. Զ., Բաղդասարյան Ա. Ա., Մանկավարժություն (ուսումնամեթոդական ձեռնարկ բուհերի համար) , Երևան, «Արտագերս» հրատ., 2017. -360 էջ:
2. Ասատրյան Լ. Թ., Կարապետյան Ն. Զ. «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա (ուսումնամեթոդական ձեռնարկ), Երևան, «Արտագերս» հրատ., 2016. -226 էջ:
3. Ասատրյան Զ. Ա., «Տարրական կրթության մանկավարժություն» (ուսումնամեթոդական ձեռնարկ), Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2017. - 160 էջ:
4. Ալեքսանյան Լ. և ուրիշներ, Ուսուցման փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների տեսությունն ու պրակտիկան, Երևանի հանրապետական հոգեբանական կենտրոն, Երևան , 2004. -130 էջ:
5. Գյուլամիրյան Զ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ» հրատ., 2015. -316 էջ:
6. Գյուրջինյան Դ. Ս., Հեքեքյան Ն. Հ., Մայրենի 3, Մեթոդական ուղեցույց, Երևան, «Էդիթ պրինտ» հրատ., 2008. էջ 32-35:
7. «Ես և շրջակա աշխարհը» ,2-4-րդ դասարան, ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2017. 80 էջ:
8. Թոփուզյան Ա. Օ., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ , Երևան, «Լինգվա, 2009, 297 էջ:
9. Կարապետյան Ն. Զ. , Հովակիմյան Ա. Հ. Ինտեգրված դասի նախագծում «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի շրջանակներում, ուսանողական գիտաժողովի նյութեր, 2015. :
10. ՀՀ կրթության մասին օրենք, Երևան, ՀՕ–297,8 մայիսի 1999:

11. ՀՀ օրենքը հանրակրթության մասին , Երևան,ՀՕ-160-ն, 23 հուլիսի2009: 12. Верзилин Н.М. Проблема классификации методов в методике преподавания биологии // Известия АПН РСФСР. 87, т-М., 1957.

13. Голанд Е.Л. Методы обучения в советской школе. _ М. , 1957.

14. Кукушкин В. С. Теория и методика обучения. – Ростов н// Д.: Феникс, 2005, -474 с.

15. Лернер ИЛ. Дидактические основы методов обучения. _ М. 1981: Дидактика средней школы(Под ред. М. Н. Скаткина. _ М., 1982.)

16. Педагогика/ Под ред. Ю.К. Бабанского. 2-е изд. _ М., 1988.

17. Скаткин М.Н. Проблемы современной дидактики. 2-е изд. _М.: Педагогика, 1984. -96 с.